

ՆԿԵՂ. ԳՐԳԵՐՈՒՄ ԿԱՄԱՅՆԿԱՆ ՍՐԱՆԳՐՈՒ- ԹԻՒՆ ԵՒ ՕՏԱՐԱՋԱՑՆ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ ԹՈՅ- ԼԱՏՐԵԼԻ ՁԵՆ՝ ¹⁾

Այժմ դառնանք Կ. Հ. Ս-ի Լուսնայում (տարւոյս Սեպտեմբեր-Հոկտեմբեր գրքում եր. 198—208) տպած յօդուածին, ամփոփելով այն որոշ կէտերի և կէտ առ կէտ պատասխանելով:

—Ա. Կ. Հ. Ս-ը անհրաժեշտ է համարում քննել եկեղեցական գրքերն ու սրբագրել պնդելով, թէ կոյր հաւատք պէտք է. պէտք է քննութեամբ համոզուել և համոզուելով հաւատքի գալ, ուստի և առում է. «իսկ համոզմունքն ու ներքին ազատութիւնը ամենաէական պայմաններն են կրօնական խնդրներուս»։ Միայն չի ասում թէ սրբագրածը ինքնիշխանութեամբ էլ անհրաժեշտ է եկեղեցում կարդալ առանց եկեղեցու լրութեան կամ պատշաճաւոր իշխանութեան հաճութեան:

—Եկեղեցական գրքերում սպրդած տառասխալները մինչև անգամ բառերը, եթէ իսկապէս սխալ են, նոր տպագրութեան ժամանակ հարկաւոր է սրբագրել, ոչ ոք դրան հակառակ չէ: Բայց, կրկնում եմ, հիմնուելով ձեռագրերի ընթերցուածների վերայ ինքնակամօրէն եկեղեցում օտարաձայն ընթերցմունք մուծանել և փոխել այն՝ ինչ որ եկեղեցու լրութիւնը ընդունել է և այդ ընդունածն էլ Կ. Հ. Ս-ի բառերով ասենք, կրօնական գաղափարն ու զգացմունքը արտայայտելու կաղապարն է դարձել և նուիրական սրբութիւնը ներելի և թողլատրելի չէ: Ձեռագրերում շատ ընթերցուածներ կան, որոնք չեն համապատասխանում եկեղեցու պիտեան կարգադրութեանն ու կանոններին: Կ. Հ. Ս-ը «քաբողեաց զառաքեալն» և «ոյս, յարութիւն»-ը սխալ է համարում. ես, ընդհակառակը ըստ կարի, ապացուցանում եմ որ ուղիղ են. և «ի սրբութիւն

¹⁾ Լուսնայ 1903 թ. № 2.

սրբոց»-ի մասին եւ տարակուսում: և կը սրբագրեմ այն ու կը կարգամ «Սուրբն սրբոց». որովհետեւ ուռերէնում գրուած է «Святая Святыхъ» (Историч. догм. և тайн. изъясненіе Бож. Литургій. Ивана Дмит. 1884 С. П. Бургъ. եր. 262), իսկ ուռերէնը անշուշտ՝ Թարգմանուած է յունարէնից. մի երկրորդը հենց նոյն ի սուրբ, ի սուրբ-ը ամբողջովին ըստ Անձեւացու կը կարգայ բաց Թողնելով ճաշակեացուք սրբութեամբ և այլն. մի երրորդը Հանգանակը ըստ Սեբեոսի կը կարգայ. հետեանք ինչ կըլինի Սյս դեռ ոչինչ. մի չորրորդը դուրս կը գայ և ամբողջ աստուածաշառութեան կարգը կը փոխի, Ս. Երուսաղէմի երբեմն միարան Յակովբ վարդապետ 2ի լինդարեանի պէս, երեակայելով Թէ, եկեղեցին վերակազմում է վերահաստատելով ս. Լուսաւորչի Ժամանակի կարգերն ու կանոնները:

Կ. Հ. Ս.-ը համոզուենք ու ներքին ազատութիւնը ամենաեական պայմանն է համարում կրօնական խնդիրներում: Այդ արդէն որոշ ուղղութեան սկզբունք է: Քրիստոնէական չին եկեղեցում (Արեւմտեան՝ կաթոլիկական և Արեւելեան՝ Յունա-Հայկական) ընդունուած է խոստովանել Ս. Գիրքը աստուածային յայտնութիւն կամ Ս. Հոգու ներշնչութեամբ գրուածք. ուստի և այդ եկեղեցում Ս. Գիրքը մեկնուում է եկեղեցական սուրբ հարց գրածներին համեմատ՝ նոր եկեղեցում (բողոքական), ուր թագաւորում է բացիօնալիզմը, սուրբ գիրքը շատ շատերից չի համարում աստուածային յայտնութիւն. ուստի և իւրաքանչիւր իրան ձեռնհաս համարող որ ոչ թէ մեկնում, այլ քննադատում է Ս. Գիրքը մեծ մասամբ բացասական հետեանքի հասնելով: Բացիօնալիզմի կարապետներից են Հաննակները և Շլաէրմաներները, որոնք իրանց աշակերտներից պատրաստում են այնպիսի աստուածաբաններ, որոնց համար է, որ Հայնէն ասում էր. «Գերմանիայում կան այնպիսի աստուածաբաններ, որոնք ձգտում են վերջ տալ Աստուծուն» (Լոււմպ, Մայիս-Յունիս, երես 331):

Շատ ուրախ ենք, որ Կ. Հ. Ս.-ը համոզմունքի ու ներքին ազատութեան մասին խօսելով հանդերձ՝ ընդունում է որ, «կրօնական ճշմարտութիւնները մատեմատիքական կամ բնագիտական ճշմարտութիւնների պէս չեն, որ իւրաքանչիւր անհատական միտք իւր բնական դատողութեամբ բննել ու պարզել կարողանաւ. նորա բղիւղում են աստուածային յայտնութեան

աղբիւրներից. իսկ յայտնութիւնը կապուած է եկեղեցւոյ պատմական անցեալի հետ, քրիստոնէական եկեղեցին իւր անմիջական կազմով ժառանգն է այդ յայտնութեան և կենդանի պահողը Աստուածային Հոգւոյ այն ներշնչումների, որոնց միջոցով յայտնեալ ճշմարտութիւնների տառը նոր ի նորոյ կենդանանում և պարզուով է՝ քրիստոնեայ անհատների համար ըմբռնելի ու հոգեւոր կենդանութեան միջոց դառնում: Ուստի անհատը կախումն ունի այստեղ եկեղեցւոյ ամբողջութիւնից... եւ այն խնդիրներում, որոնց իւր ըմբռնումը չի հասնում, ենթարկում է եկեղեցւոյ հեղինակութեանը... Այս ընդօրինակութիւնը այնքան համապատասխանում է մեր հայեացքին, և այնքան լաւ է ձեւակերպուած՝ որ մենք մեր խորին շնորհակալութիւնը պէտք է յայտնենք Վ. Հ. Ս.-ին: Բայց համաժողով չենք և հակասութիւն ենք տեսնում նրա հետ: Եւ եղբակացութեան մէջ... Նոյն իսկ զուտ կրօնական ճշմարտութիւնների համար շատ երկմիտ և վտանգաւոր դարձուած է ասելը. «Անհատը պարտաւոր է ընդունել և խոստովանել այն՝ ինչ որ իւր եկեղեցւոյ լրութիւնն ընդունում ու քարոզում է»:

Մի՛թէ, Ուրեմն ինչո՞ւ էր մի քիչ վերեւ գեղեցիկ դարձուածներով և բառերով ապացուցանում, որ անհատը կախումն ունի եկեղեցւոյց եւ պէտք է ենթարկուի եկեղեցւոյ հեղինակութեանը:

Ծագած խնդրում ես՝ այսպէս եմ ասում, նա այլ կերպ նրա առարկութիւնները ես չեմ ընդունում, իմը՝—նա: Ո՛ւմ վճռին պէտք է հնազանդենք. ում հեղինակաւոր ձայնը մեզ ի կարգ պէտք է հրաւիրի: Վ. Հ. Ս.-ը սրբագրութեան գործում օրինակ է բերում ռուս պատրիարք Նիկոնին:

Մենք անհատի կողմից որ և է սրբագրութիւն և օտարաձայն ընթերցմունք եկեղեցւում չենք ընդունում. Նիկոնը եթէ սրբագրել է իւր եկեղեցւոյ գրքերը՝ նախ և առաջ՝ ինչպէս Վ. Հ. Ս.-ն է ասում, իւր եկեղեցւոյ պատրիարքն էր, և սրբագրելու ընդ կար, որ սրբագրեց. երկրորդ՝ Նիկոնը երբէք ինքնադուրս իւր ուղիղ համարածը առաջ եկեղեցւում չըկարդաց ու յետոյ սրբագրեց, որպէս Վ. Հ. Ս.-ն է ասում: Նիկոնը նախ և առաջ խորհրդակցեց Պապիսի յոյն պատրիարքի հետ, ապա առաջարկեց Ռուսաց այն ժամանակի թագաւոր Ալեքսէյ Միխայլովիչին տեղական կամ ազգային ժողով կազմել: Թագաւորը համաձայնեց և իւր աւագանիով ներկայ եղաւ ժողովին: Եթէ

չը հաշուենք էլ Պալիսի պատրիարքին, այնուամենայնիւ ժողովին ներկայ էին 5 մետրապոլիտ, 3 արքեպիսկոպոս, 1 եպիսկոպոս, մի քանի ծայրագոյն վարդապետներ ու աւագ քահանաներ, թւով 34 հոգի:

Ժողովի մէջ նիկոնը, ապացուցանելով ոուս եկեղեցական գրքերի մէջ սպրդած սխալները, առաջարկում է. պէ՛տք է արդեօք հետեւել Մոսկուայում տպուած եկեղեցական գրքերին, ուրոնց մէջ թարգմանիչների և գրիչների անհամութիւններից համեմատած հին սլաւոն թարգմանութեան և յոյն բնագրերին շատ անհեթեթութիւններ ու տարբերութիւններ, մի խօսքով, սխալներ կան, թէ՛ առաջնորդուել հին, յունական և սլաւոնական, բնագրերով՝ որոնք մի և նոյն կարգ ու կանոնն ունին: Ժողովը պատասխանեց. «Արժան և իրաւ» Պէտք է սրբագրել հին ձեռագրերի և յոյն ընդօրինակութիւնների համեմատաւ. թէ այնուհետեւ որպիսի զգուշաւորութեամբ ձեռնարկուեց սրբագրութիւնը յայտնի է պատմութեան մէջ (Жизнь замѣчательныхъ людей. Никонъ. Երես 46—51):

Տեսնո՞ւմ էք. մի պատրիարք, նախքան եկեղեցական գրքերում սպրդած սխալները ուղղելը ժողով է կազմում թագաւորի և աւագանու ներկայութեամբ, դիմում է մայր եկեղեցու (յունական եկեղեցին. ոուսաց եկեղեցու համար մայր է) տիեզերական պատրիարքի հեղինակութեանը. համարեա եկեղեցու ամբողջութիւնը ի մասնակցութիւն է կոչում: Դրա համար է, որ մենք էլ ասել և ասում ենք՝ ռա՛հմա՛ր իրաւունք ու համարձակութիւն պէտք է չունենայ իւր կամեցած սրբագրութիւնները ըստ կամս անել: Իսկ Կ. Հ. Ս.-ը դեռ սխալն ու ուղիղը հրապարակ չը հանած սկսեց եկեղեցում իւր օտարաձայն ընթերցումները, օտարաձայնութիւնը խօսակցութեան և դատողութեան նիւթ դառնալուց յետոյ նոր սկսեց պրպտել ձեռագիրն ու հին գրքերը, որոնք իրանց բազմատեսակ ընթերցուածներով որքան որ հաստատում են իւր ասածը, նոյնքան և հերքում: Խնդիրը դեռ վէճի նիւթ է, դեռ վճռուած չէ, բայց Կ. Հ. Ս.-ը շարունակում է իւր օտարաձայնութիւնը: 2ը մոռանանք, որ նիկոնը եկեղեցական գրքերի սրբագրութիւնը կատարել է 17-րդ դարի առաջին քառորդում, իսկ մենք 20-րդումն ենք, և մեր եկեղեցական գրքերը տասնեակ նոր տպագրութիւն ունենալով ամեն անգամ ունեցել են հին ձեռագրերի հետ համեմատական

սրբազրուծիւն պատշաճաւոր զգուշաւորութեամբ, որի մասին յետոյ:

Մենք ասում ենք պարտաւորական է այն՝ ինչ որ այժմ եկեղեցու լրութիւնից ընդունուած է ու գործադրուում է, որը և սրբազործուած ու նուիրագործուած է դարերի ընթացքում: Ա. Հ. Ս.-ը ասում է, թէ ինչ որ անհատը ուղիղ է համարում՝ այնպէս կարող է կարգաւ. և թէ, պէտք է վերականգնել հինը, առանց որոշելու թէ հին ասելով մինչև ո՞ր դարը պէտք է հասկանանք: Ենթադրում ենք մինչև 13-րդ դարը, որովհետեւ նա Հնորոհայուն և Լամբրոնացուն հին է համարում. թէև մենք նրանց հին չենք համարում և նրանք արդէն բաւական ներմուծութիւններ են արել, որոնք ըստ Հ. Ն.-ի ընդունելի պէտք է չլլինէին, որովհետև նրանք ևս չքարոզեաց զառաքեալն՝ ասողների շրջանին են պատկանում Ս. Գրիգոր Նարեկացուց յետոյ ծաղկելով:

Մինչև Ներսէս Լամբրոնացին, որ ծաղկեց 12-րդ դարի վերջին, սուրբ պատարագը, դոնէ Հայաստանի վանքերում այնպիսի զգեստով չէր պաշտուում ինչպէս այժմ: Ապացոյց Լամբրոնացին զայրացած Սանահնեցիների, Հաղբատեցիների, Անեցիների, Բոբայրեցիների և Սիւնեցիների դէմ գրում է Լեոնին. «իսկ ես ունեւով զՔրիստոս վասն իմ օր ըստ օրէ առաջի Աստուծոյ Հօր պատարագ, խափանեմ զնորա սպասաւորելն քահանայական սուրբ զգեստիւք և բացաւ գլխով և պաշտօնէից սպասաւորութեամբ, զոր հրամայեաց Աստուած Մովսէսին զգեստուցն կարգ, և Պաւղոս զբանալ գլխոյն, և սուրբ Հարքն զպաշտօնէիցն դասս, և հագնեմ գիշա, որպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու թիզ կնգուղ վրացի սաքուլայով. և պատարագեմ հաղբատեցի սև փիլոնով, և քակեմ զգուռն ի վերայս, և ձգեմ զվարագոյրն, և անհաղորդ առնեմ զԺողովուրդն յիւրեանց Աստուծոյ բաւիչ մահուանէն, զինչ կու առնեն ամենայն վանօքայքդ ի վերն և ի վայրս և չեն պատկառեր ի նոյն ինքն ի պատարագի խորհրդոյն»: Եւ դարձեալ թէ. «Արդ փոխեցէք դուք զայս լատինացի ձևս... և մեր հաւանեմք Չորագետեցեացն, և փոխեմք զմերս, և կատարեմք զպատարագն սաքուլայով, և երկու կանգուն վեղարով. ծրարեմք զմետաքսեայ զգեստն ի պատարագին, որպէս նոքա կամին և ոչ քթանազգեստ՝ որպէս Աստուած հրամայեաց առնել Ահարոնի և որդւոց նորա պատմուածանս կտաւեայս, պճղնաւորս, զոր նոքա տգիտութեամբ յա-

չաղենա։ Պատարագի զգեստաւորութեան անհրաժեշտութեան մասին կարգում ենք միայն 14-րդ դարում գումարուած Ստյո Ե. Ժողովի որոշումներէ մէջ։ Թէեւ այդ ժողովը, որ աւելի Ժողովակ, կարելի է համարել, որովհետեւ Արեւելեան հայք չեն մասնակցել իւր օտարամուծութիւնների համար անընդունելի եղաւ։

Ինչպէս տեսանք, մանաւանդ վաճառքներում եկեղեցական զգեստները հնումն գործածուած չէին. այժմ կարող ենք յայտել պատարագի զգեստներից մէկն ու մէկը. և ինչո՞ւ յայտաւենք, քանի որ դարերով գործածուելով՝ ծառայում է եկեղեցական կարգերի շքեղութեանն ու փառաւորութեանը, որը եկեղեցու լրութիւնը անհրաժեշտ է համարում։

Պատարագի զգեստաւորութեան Վերահսկող խորինք երգը յօրինուած է 13-րդ դարի սկզբին վրանով պատարագելու առիթով։—Այժմ կարող ենք Վերահսկող խորինք չասել, կամ Վերահսկող խորինք ասելով՝ վրանի մէջ պատարագ մատուցանել առանց վէճ քարի Եկեղեցու լրութիւնը ընդունելով ուստեաց և տէրունական օրերին անպատճառ երգել Վերահսկող խորինք, սահմանել է Մեծպատին շքեղել և փակ պատարագ մատուցանել բայց այնուամենայնիւ եկեղեցական զգեստով և ոչ սև փիլոնով ու վեղարով։

Եպիսկոպոսական խոյրը հայկական չէ։ Գրիգոր Տղայ կոչուածը՝ 12-րդ դարի վերջերին ստացել է Հռովմայ պապից։ Այժմ, առանց եկեղեցու լրութեան հաւանութեան կարող ենք չը գործածել այն. և ինչո՞ւ չը պէտք է գործածենք, քանի որ եկեղեցին դրանով ոչինչ չը կորցնելով՝ պայծառանում է եկեղեցական պաշտօնեաների դասակարգութեան մէկի ևս ինքնուրոյն զգեստի ձեւով։ Նոյնը կասենք և վակասի համար։ Ակասու շատ հին չէ. եկեղեցական բոլոր զգեստներն էլ պատշաճ աղօթքներ ունեն. վակասի համար կրկնուած է փորութարի աղօթքը։ Յայտնի ցուցմունք չը կայ, թէ երբ է մտել գործածութեան մէջ։ Քանի որ վակասը, գեղեցիկ ներդաշնակութիւն է տալիս պատարագի զգեստին. և, հին ուխտի վակասի անուանով կոչուելով, և երկոտասան առաքեալների պատկերները կրելով մեր մտքին յանդիման է կացուցանում, թէ պատարագի չը երկոտասան առաքեալների բարոյութեամբ լուսաւորուած բրիստոնեայ ազգերի համար է մատուցանում ս. պատարագը, ինչոպէս հին ուխտի քահանայապետը իւր լանջքին կրած վակասի։

վերայ գրուած Իսրայէլի երկոտասան ցեղերի համար էր պաշտամունքը կատարուած.—ինչ կարիք կայ այժմ, առարկելով, թէ վակասը, որովհետեւ թարգմանչաց ժամանակով չը կար, ուրեմն իրբեւ նորամածութիւն, պէտք է չգործածենք:

Դուինի Էրզ ժողովը Յովհան Դ. Իմաստասէրի նախագահութեամբ թող է տալիս ա. Աղուհացից շաբաթ և կիւրակէ օրերը ձուկն ու կաթնեղէն ուտել (յօդ. է.) բ. որ քահանայք Երեխայութեան (յօդ. Ժ.) և հիւանդաց օժման (յօդ. Ժա.) ձէթ օրհնեն: Այդ հօ Ժ-դ դարից էլ առաջ էր. բայց կատարուում է:

Ըստ Արժիշեցու՝ Գրքից առաջ քարոզն է. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի... եւ ամենեցուն օրհնեցողութեան զՏէր աղաչեսցուք: Վասն ամենայն քաղաքաց եւ գաւառաց եւ որոց հաւատով ընակեալ են ի նոսա զՏէր աղաչեսցուք: Այսպէս կան այլ ընթերցուածներ ու աւելագրութիւններ, որոնք եկեղեցու լրութիւնը սրբագրել ու յապաւել է և կազմել է այն՝ ինչ որ այժմ գործադրուում է: Կարո՞ղ է անհատը ինքնակամօրէն ըստ Արժիշեցու պաշտել ժամերգութիւնն ու ս. պատարագը: Ըստ նոյն Արժիշեցու՝ «Զի ողորմած» մաղթանքից յետոյ գրուած է. «Յետ այսորիկ երկրպագէ սեղանոյն քահանայն, և եկեալ բազմի յաթոռն և սարկաւազն տայ ի ձեռս նորա զաւետարանն, և դարձեալ խոնարհի ի ծունկս նորա և առնու: —Այժմ պաշտուում է այս կարգը:—Միայն հայրապետը և Տաճկաստանում վիճակների եպիսկոպոսները և այն ևս մեծ մասամբ ձեռնադրութիւն անելիս՝ երբ արդէն բնմի վերայ աթոռ լինում է, գրքի ժամանակ բազմում կամ բազմած են մնում: Իսկ անպաշտօն պատարագիչ եպիսկոպոսներն ու քահանայք կանգնած են մնում սեղանի առաջ: Տեսնո՞ւմ էք. ինչ որ հին է այժմ անպայման պարտաւորական չէ. պատառքական է այն՝ ինչ որ այժմ կայ, և դարձեալ կրկնում եմ, ինչ որ եկեղեցու լրութիւնը ընդունել է ու գործադրում: Որովհետեւ եկեղեցին դարերի ընթացքում քննել, զտել, աւելորդները յապաւել, անհրաժեշտը լրացրել և այնպէս որոշ ձևը պարտաւորական է դարձրել: Ամենասովորական ձեւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք-ը եթէ կամենանք յունական բնագրից նօթից թարգմանել, պէտք է ասենք. ձեւ ևս խաղաղութեամբ առ Տէր աղօթեսցուք. որովհետեւ ուսերէն թարգմանութիւնը, որ կատարուած է յունարէնից և սրբագրուած՝ նիկոնից՝ այդպէս ունի Յակայն մենք ասում ենք ձեւ ևս խաղա-

դուրեան զՏէր աղաչեսցուք» և թարգմանում. դարձեալ աղաչենք խաղաղութեան կամ խաղաղարար Տիրոջը. իսկ ոուսը թարգմանում. դարձեալ Տիրոջը աղօթենք խաղաղութեամբ կամ հանդարտութեամբ: Մեր արտասանածը մեր հոգու արտայայտութեան ձևն է նրանցը՝ իրանց. երկուսն էլ ուղղափառական են ու հաճելի Աստուծուն, որովհետեւ մէջը հայհոյութիւն չը կայ: Ուրեմն և փոխելու կարիք չը կայ:

Մենք անհրաժեշտ ենք համարում անհատի կախումն եկեղեցուց. Կ. Հ. Ս-ը չի հերքում այդ. բայց, ինչպէս վերը տեսանք, խոտորում և գայթակ է: Մենք հետեւելով Ս. Հարց գրուածքներին և անսալով եկեղեցու հեղինակաւորութեան Ս. Գիրքը համարում ենք աստուածային յայտնութիւն և Ս. Հոգու ներշնչութեամբ գրուած. ապացոյց բերելով դրան՝ աւետարանիչների համանմանութիւնը Յիսուսի կեանքի և բարոյութեան վերաբերութեամբ, ընդունելով Յիսուս Քրիստոսին կատարումը օրինաց և մարգարէից՝ այսինքն հին կտակարանի. իսկ բացի նախկին հետևողները Ս. Գրքում և՛ յատկապէս՝ նոր Կտակարանում մէջ են բերում տարբերութիւնները, որպէս զի ապացուցանեն թէ Ս. Գիրքը աստուածային յայտնութեամբ կամ Ս. Հոգու ներշնչութեամբ չէ գրուած, նրանք աւետարանը համարում են Յիսուսի մասին զրոյցների հաւաքածու՝ միւս աւետարանիչների անունով խմբագրուած և ճոխացրած Մարկոսի աւետարանի համեմատ: Այնպիսիները այս բացասական հետեւանքին են հասնում քառական տարբերութիւնները, դէպքերի յետ և առաջ գրուած լինելը, կամ, որևէ դէպք աւետարանիչներից մէկն ու մէկից բաց թողուած լինելը շեշտելով: Այդպիսիքը աւելի տառն են ի նկատ առնում քան հոգին և մոռանում են. «Զոր միոյ մարգարէի թողեալ է, միւսովն ընու Հոգին Սուրբ», սկզբունքը:

Կ. Հ. Ս-ը համոզմունքն ու ներքին աղատութիւնը կրօնական խնդիրներում ամենաէական պայմանները համարելով՝ նոր Կտակարանի Աստուածաբանութեան թէ՛ ներածութեան մէջ այնպիսի ազատութիւն էր տուել իրան, որ 1901 թուի քննութիւնների ժամանակ Արժ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը աւելի քան պատամիտ համարեց, ես ևս յայտնեցի ում պէտք է: Ամբողջ քննութեան ժամանակ եկեղեցական հայրերից ոչ մէկի անունը չյիշուեց: Վճռական ձայնը Հառնակինն էր ու Շլայերմախերինը, որոնք փոխարինել էին Ս. Յովհան

Ոսկերբերանին, ա. Գրիգոր Աստուածաբանին, Բարսեղ Կեսարացուն և այլն, Կ. Հ. Ս.-ը համարուած է ջերմ պահպանողական, ես և Մելիք-Թանգեան Հայր սուրբը նոյն բաղդը չունինք. բայց ինչպէս երևում է, դերերը փոխուած են.—Ներսիսեան Հոգևոր դպրոցի մի, եթէ չեմ սխալուում կրօնական առարկաների պահպանողական դասատու, եկեղեցում տօնուող ս. Մովսէս Խորենացուն, նրա պատմութիւնը քննադատելիս՝ անուանեց ստաբօս, խաբերայ, խաղաքող և այլն: Այդ պարոնն ևս յաւակնութիւն ունի Գերմանիայի անունով ճոխանալու Աղատամիտ, յանուանէ ասենք, պ. Ստեփան Մալխասեանը, պաշտպան հանդիսացաւ եկեղեցու սրբին, նրա հասցէին ուղղուած անկոպար բառերը յետ դարձնելով ուղղողին:—Այո, այժմ դերերը փոխուած են: Եթէ այսպէս շարունակուի, այն ժամանակ մենք երաւունք կունենանք ասելու, որ այդպիսի պահպանողականները միայն իրանց արդիւնաւէտ և փափուկ տեղերը պահպանելու համար են պահպանողական: Մեր վերաբերութեամբ օտարները — Կոնիւրեռ, Մառ և այլն աւելի զգոյշ են քան մերոնք: Մենք փոքր ինչ շեղուեցինք. բայց արդարեալ կարող ենք Կ. Հ. Ս.-ի նմանօրինակ վարմունքով. (Լուսայ եր. 201—202). նա էլ գրում է. «Շատ սովորական է մեր մէջ այն անբովանդակ դարձուածը թէ, հաւատալ պէտք է, պէտք չէ բռնել... Մենք չենք պատկառում առաքեալի այն ահաւոր խօսքից, թէ «Ամենայն ինչ որ ո՛չ ի հաւատոց է, մեղք են»: ու ինքներս ամենեկին հաւատ չունենալով՝ ոչ մի նշանակութիւն չը տալով կրօնական սկզբունքներին ու գիտելիքներին, մեծ իմաստութիւն ենք համարում և հաւատարմութիւն դէպ ի ազգային եկեղեցին՝ ուրիշների առաջ իբրեւ հաւատացող ձեանալ և պահանջել, որ այդ բոլորը նշանակութիւն ունենայ, — որպէս զի հասարակ ժողովուրդը չը գայթակղուի:— Ես այս իմ հասցէին չեմ ընդունում. որովհետեւ ով որ ինձ ճանաչում է, գիտէ որ ես ամենից քիչ ընդունակ եմ հաւատ չունենալով՝ ոչ մի նշանակութիւն չը տալով կրօնական սկզբունքներին ու գիտելիքներին, մեծ իմաստութիւն համարեմ և հաւատարմութիւն դէպ ի ազգային եկեղեցին՝ ուրիշների առաջ իբրեւ հաւատացող ձեանալ և պահանջել, — մի խօսքով՝ փարիսեցի լինել ես, իբրեւ հոգևորական ձեռնադրելիս լսել եմ ձեռնադրողի պատուէրը. «Ունկն գի՛ր և տես. զոր եղանակես բերանով՝ հաւատացես և սրտիւ, և որոց հաւատաս սրտիւ, զնոսին և գոր-

ծով ցուցցես (Մաշտ. ձեռն. կարգ սաղմոսերգութի)։ Եկեղեցու կարգը մեզ աւանդ է հասել. և մենք պարտ ենք, զաւանդն, զոր ընկալաք՝ պինդ պահելը։ Այդ է պատճառը, որ եկեղեցում օտարաձայնութիւն լսելով՝ չենք կարող անտարբեր մնալ. մանաւանդ որ Կարապետ Հայր սուրբը սպառնում է իւր օտարաձայնութիւնն աւելի ևս ընդարձակել (տես Լուսնայ սեպտեմբ.—Հոկտեմբ. 1902 երգս 208, վերջաբան)։

—Բ. Կ. Հ. Ս-ը առարկելով, որ Արարատում տպած իւր յօդուածը, որովհետեւ Վեհափառ Հայրապետի հրամանով է տպուել Մայր Աթոռի պաշտօնական ամսագրում, ուրեմն եզրակացնում է, թէ իւր չբարոյեաց յառաքելւոյն և ջշոյս յառութեան ընթերցմունքը պաշտօնապէս ընդունուած պէտք է համարել. իմ պատասխանն էլ Վեհի հրամանով է տպուել նոյն պաշտօնական Արարատում, ուրեմն իմ յօդուածն էլ պաշտօնական հերքումն է Կ. Հ. Ս-ի ասածի։ Բայց այդպէս չէ. Արարատը կազմուած է երկու բաժնից—պաշտօնականից և մասնաւորից՝ կամ ոչ-պաշտօնականից։ Մեր երկուսի յօդուածներն էլ իբրեւ ընտանիքական յօդուածներ՝ տպուել են ոչ պաշտօնական բաժնում և ամենեւին պաշտօնական կերպարանք չունեն։ Ես աւելին կասեմ։ Վեհափառ Հայրապետն անգամ ինքնակամ փոփոխութիւններ յանձն չի առնի անել կամ թողլ տալ. որովհետեւ նա ընտրուած է ազգից լինել եղած կարգերի գլխաւոր հսկողն ու պահպանը. նա ևս հանգ. Գէորգ Դ-ի պէս մտածելով պէտք է թելադրի. զի եթէ ինքն իսկ Հայրապետս մեր ոչ ի դէպ ոչ ի պատշաճ վարկաւ զառ ի նախնեացն կարգեալսն փոփոխել իւրովն իշխանութեամբ՝ մինչչեւ ազգայնոյ ընդհանուր եկեղեցական իրիք հանդերձեալ ժողովոյ մանրակրկիտ քննութեամբ սահմանեալ իցէ փոխել կամ զեղչել ինչ ինչ նկատելիս ի բանըս նշովից... ո՞րչափ ևս առաւել չէ օրէն իշխել ումեք ի մեծաց կամ ի փոքունց՝ ձեռնամուխ լինել յայնպիսի ինչ փոփոխումն կամաւոր (Մաշտոց ձեռնագր. 1876. յառաջ)։

Կ. Հ. Ս-ը ի նպատակ իւր ընթերցմունքի ասում է. եղել է յառաքելւոյն. իսկ ըթի մէկը արտագրելիս՝ վերջին ն տառից առաջ. սն բաց է թողել և դարձրել է յառաքելւն. մի երկրորդն էլ յ նախորի տեղ զ է դրել՝ դարձրել է զառաքելւն.— նոյնպէս դատելով՝ մենք էլ կասենք. եղել է զառաքելւն, իսկ ըթին մէկը արտագրելիս՝ վերջին ն տառից առաջ ս է աւելացրել, դարձրել է զառաքելւսն. մի երրորդն էլ զ-ի տեղ յ դնե-

Լով՝ դարձել է յառաքեալսն:—Այսպէս դատելով ոչինչ չենք կարող ոչ ապացուցանել և ոչ հերքել: Մի բան հերքելու համար հարկաւոր է ապացուցանել նրա անհեթեթութիւնը թէ մաքի, թէ իրողութեան և թէ լեզուի կողմից. իսկական գիտունը մեծ համբերութեամբ հետամուտ է լինում առաջ ու առաջ եղած դրութիւնը հաստատելու հնարները գտնել. երբ անհնարին է լինում այդ, այն ժամանակ նշնպիսի համբերութեամբ նոր դրութեան անհրաժեշտութիւնը ապացուցանել. որովհետեւ միշտ դիւրին է մի շէնքքանդելը, բայց նորը կառուցանելը՝ դժուարին: Իսկ մեր բանասէրները, կամ որոնք գիտուն կոչուելու ցանկութիւն ունեն՝ առանց պատշաճաւոր քննութեան՝ եղածը սխալ են հրատարակում: Այսպէս է և եկեղեցական խնդիրներում: Որոնց մասին դարձեալ և դարձեալ կ'առնենք. ձեռագրերի ընթերցմունքները և ինչ որ եղել է թերեւ, անյիշատակ ժամանակներում պարտաւորական չէ. պարտաւորականն այն է, ինչ որ դարերի ընթացքում քննութեան բովից անցնելով՝ հասել է մեզ, և արտայայտում է եկեղեցու լրութեան հայեացքը:

—Գ. Կ. Հ. Ս-ը ասում է. որ անհաստների ձեռքով պէտք է ուշիղն ու սխալը որոշուի: Այդպիսի անհաստներ են եղել զիցուք Մաթուսաղայ, Պետրոս և այլն. և շարունակում է. «Երբ մեր եկեղեցին վէճի է բռնուել օտար եկեղեցիների հետ, կըրկին անհաստներ՝ մի մի Պետրոս, Մաթուսաղայ... չեն եղել, որ հին ձեռագիրները բերել, նախնական ու հարազատ աւանդութիւնը մէջ տեղ են բերել ու եկեղեցին իւր կնիքը դնելով՝ վաւերացրել է»:

Ճիշտ այդպէս է. բայց Կ. Հ. Ս-ի և Պետրոսների արածի մէջ տարբերութիւն կայ. նախ, նրանք եկեղեցու մէջ օտար բաժայնութիւններ չէին մուծանում. այլ աշխատում էին եղածը սրբութեամբ և անթերի պաշտել և պաշտել տալ. Երկրորդ նրանք մաքառում էին օտարների դէմ երկար ճառերի մէջ հերքելով օտարների բանդագուշանքները և ապացուցանելով մեր եկեղեցու ուղղափառութիւնը; և դրանց գրածները կրօնական ուսանելի գրուածներ են, և ոչ եկեղեցական գրքեր. եկեղեցական գրքեր նրանք են կոչուում, որոնք աստուածապաշտութեան ժամանակ եկեղեցում գործ են դրւում: Երրորդ, որքան և նրանց գրածները եկեղեցական չէին, այնուամենայնիւ, ինչպէս ինքն Կ. Հ. Ս-ը խոստովանում է՝ եկեղեցին իւր կնիքը դնելով՝ վաւերացնում էր: Ընդհակառակն, Կ. Հ. Ս-ը եկեղեցու ամբողջու-

Թիւնից ընդունուածը փոփոխում է, և, չը սպասելով որ եկեղեցին իւր կնիքը դնելով վաւերացնի՝ ինքնիշխանաբար գործադրում է, որը ըստ մեզ՝ եկեղեցու իրականացնող թիւնն է։

Կ. Հ. Ս-ը իդուր է կարծում, որ Ս. Սահակ, Ս. Յովհան Օձնեցի, Ս. Ներսէս Ընորհալի, քարոզեաց յառաքեալսն են կարդացել, Մեր ամենահին ձեռագրերը Թ-րդ դարից այն կողմը չեն անցնում։ Ս. Սահակի օրից ձեռագիր չէ մնացել, և հազիւ թէ եկեղեցին այն ժամանակ այնքան կալմակերպուած լինէր, որ հանգանակը ամբողջութեամբ ինչպէս այժմ կայ, կիրառութեան մէջ լինէր։ Ս. Սահակի ժամանակ Հին և Նոր կտակարանները նոր թարգմանուեցին և եկեղեցու ժամկարգութիւնը կարելի է ասել ամբողջապէս կալմուած էր սաղմոսագութիւնից և քարոզներից, որը, ուսները յունարէնից ասնելով՝ եկտեհիա (ΕΚΤΕΗΙΑ) են կոչում։ Ս. Յովհան Օձնեցին, որ յոյներին այնքան հակառակ էր, մինչ նրանց չը նմանելու համար եկեղեցական ընդհանուր կանոններից շեղումները ներելի էր համարում՝ ամենեւին չէր համակերպուիլ յունամոլ Ներսէս Գ. Ընտղի հանգանակին, եթէ մինչև անգամ ընդունենք, թէ Սեբեոսի առաջ բերածը աղաւաղուած չէ։ յայտնի է, որ Ս. Գրիգոր Նարեկացին Թ-րդ դարի սկզբում և Լամբրոնացին ԹԲ-րդ դարի վերջերին, Ընորհալուն համարեա ժամանակակից քարոզեաց զառաքեալն ընթերցմունքը ունէին, ինչպէս վերը պարզել ենք։ Իդուր է Կ. Հ. Ս-ը միշին դարերի գործիչների վերայ բարեւ նետում, նրանց գրչակներ հեղինակն անունը տալով, նրանք մեր գրականութեան և մեր եկեղեցու արժանաւոր մշակներն են, որոնք ժամանակի պահանջին համեմատ վաստակել են. և մենք երախտապարտ պէտք է լինենք դէպի նրանց յիշատակը։ 2է՞ որ մեր ձեռագրերը, որոնցով Հ. Վ-ը տքնում է ապացուցանել ու հաստատել իւր ասածը, սակաւ բացառութեամբ այդ գրչակ համարուածների արտագրութիւններն են։ Մենք չը գիտենք միշին դար ասելով Կ. Հ. Ս-ը որ շրջանը կամ որ դարից մինչև որ դարը ի նկատի ունի. բայց ընդհանուր առմամբ՝ 5-րդ դարից մինչև 15-րդ դարը միշին դար է կոչւում. ուր հայոցս համար կողք կողքի ծաղկում էին Եփրեսերն ու Մայրավանեցին. Ընորհալի և պարագայքն ու Գրիգոր Տուտեորդին, Հաղարտեցիք, Քոբայրեցիք, Անեցիք ու Սիւնեցիք։ Ընորհալի և պարագայք կարողացել են իրանց գրածները յաւերժացնել ապագայիցս համար յաջորդակտն շարունակու-

Թեամբ իրանց իշխանական ցեղի՝ և հայրապետական աթոռի գահակալութեամբ. գծրազարար Տուտեորդին և Հայաստանեայց զուրկ էին այդ յարմարութիւնից. ենթարկուած լինելով Ալ-փալանների, Տուղրիլների, Չինգիզիանների և այլն յարձակմունքների ու աներաճութեանց. ձեռքի տակ չունինք Ձորագետեցիների, Անեցիների և Սիւնեցիների զրաճները. բայց հենց Հնորհալու և պարագայից պատասխաններից կարող ենք դատել թէ դրանք որպիսի քաջ ախոյեաններ են եղել մեր եկեղեցու իրականց և ինքնուրունութեան պաշտպանութեան գործում. Իմ աչքին շատ մեծ արժէք ունի մի Տուտեորդի Գրիգոր, որի աստուածսիրութեան, եկեղեցասիրութեան և հայրենասիրութեան առհաւատչեան ունինք Սանահնոյ բազմաթիւ վանքը և աղբարարական թղթերը դէպ ի Կիլիկիցիք՝ չը շեղուիլ հայրենի ականդից. նրա քրիստոնէական մաքուր հաւատը տեսնում ենք նրա գերեզմանի վերայ, Սանահնոյ վանքում, կանգնած խաչքարի արձանագրութեան¹⁾ մէջ, որ ինքն նախապէս պատրաստել է ընտիր հայերէնով, որ իւր ոճի վեմուութեամբ ոչնչով պակաս չէ Լամբրոնացու լաւագոյն գրուածքներից, Թէև Լամբրոնացին նրա մասին գրում է. «Ուտելով և ըմպելով ընդ աշխարհականաց զպորտն պարարէ, և զեկեղեցւոյ գուռն թէ ընդ ո՞ր է, բնաւ չգիտէ» (Թուղթ առ Լեոն):

Ներսէս Հնորհալի, Գրիգոր Տղայ և Լամբրոնացի, որոնք յախուռն վատարանում են Հայաստանցիներին, եթէ իրանց մնաւ՝ վաղուց եկեղեցին միացրած կը լինէին յոյն կամ լատին եկեղեցուն. Ահա թէ ի՞նչ է ասում Լամբրոնացին իւր համար. «և է ինձ հայն որպէս զլատինացին, և լատինացին որպէս զհելլենացին, և զհելլենացին՝ որպէս զեգիպտացին, և եգիպտացին՝

¹⁾ Առաջ ենք բերում այդ արձանագրութիւնը, հանելով Ի. Յարութիւնեանի «Սանահն» գրքոյկից. «Յամի յորում եղև կատարումն արքային վրաց Գուրգէնի ևս Գրիգոր վարդապետ որդի Տուտայ Խաչինեցի որ բնակեալ ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս կանգնեցի զեաջ ի վերայ հանգստարանի իմոյ ակնունելով ելից կենցաղոյս, և արդ անկեալ դնիմ առ ոտս բոնշանդ Աստուծոյ և աղաչեմ անբարբառ շրթամբ զի ի մեծի երեման քոյ լինիցիս բարեխաւս անարժան ծառայիս Քրիստոսի Եւ որք երկրպագէք յիշեցէք ի Յիս. Քրիս. կանգնեցաւ ի հայրապետութեան Յովհաննէսի, յորում ամի նորոգեցաւ կաթողիկէն սբ. ի Թուին ՈԼԴ (634—1185). զՄխիթար կապմիչս իշեցէք յիշեցէք ի Քրիստոս: Ծ. ԽՄԲ.

որպէս զասորին... և սիրով Գրիստոսի զամենայն կրճիմն բա-
կեմ. որով բարեհաջակիմ և ի լատինացոց եկեղեցիս, և ի հել-
լենացոց, և յասորոց և կամ ի Հայաստանս, և ընդ սոսա ան-
շարժ, և ի նոցին աւանդութիւնն անփոփոխ. Այս բառերը
որպէս բառեր՝ շատ լաւ են. բայց իրականութեան մէջ նշանա-
կում են մի մարդ, որ զուրկ է ազգային ինքնատիրութիւնից,
որի համար արժէք չունի իւր եկեղեցու ինքնուրոյնութիւնը,
որ դին չէ դնում իւր եկեղեցու աւանդութիւններին, որ նա-
խանձախնդրութիւն չունի իւր եկեղեցու իրաւունքները պաշտ-
պանել. և այդ ամենը գիտէք ինչո՞ւ. որպէս զի կարողանայ ա-
սել. Եկեղեցիքն Անտիոքոս՝ լատինացոցն և հելլենացոցն,
որր Պաւլոսի անուամբ զմեր նուաստութիւնս բարեհամբաւեն,
և նորին աթոռոյն արժանապատիւ լինել յաշորդ վկայենաւ. Եւ
այս՝ Պաւլոսի աթոռոյն արժանապատիւ յաշորդը գրում է.
«Արդ զայս ամենայն... և ի մտաց խղճէ բարի վկայութիւն ան-
տես առնեմ, և ի Չորոյ գետ զերկուց արանց, որը իբրեւ
զշունս լիւրջս հաչեն, զկամս հաճեմ». (Թուղթ առ Լևոն).
— Իմ համար «Պաւլոսի աթոռոյն արժանապատիւ յաշորդ
Լամբրոնացոց շատ աւելի բարձր են Յովհան Որոտնեցի, Գրի-
գոր Տաթևացի, Թովմա Մեծոփեցի և այլն. թէ և խոստովանում
եմ. նրանց գրածների մէջ կան այնպիսի բաներ, որ այժմ հնա-
ցած են. Սրանց նմաններին հեգնաբար անուանել միջնադա-
րեան գրչակներ, ես կը խղճահարուեմ:

4. Հ. Ս.-ը ասում է, որ կարող է ապացոյցներ բերել թէ
մինչև վերջին ժամանակները բարոյեաց յառաքեալսն գրողներ
և կարգացողներ են եղել. որ միայն հանգուցեալ ներսէս
պատրիարքը չէր այդս յարութեան կարգում, այլ սորանից
դեռ 30—40 տարի առաջ այդպէս կարգում էին տաճկահայոց
շատ եկեղեցիներում հին հոգևորականներ, որոնք անշուշտ
բերնէ բերան սովորել էին իրենց հայրերից. —

Ցանկալի է իմանալ ինչ կարիք կար գրելու բարոյեաց
յառաքեալսն՝ բանի որ տպագրութիւնը այնքան առաջ է գնա-
ցել, որ ձեռագրերի էլ կարիք չունենք. Եթէ մի Փշտմալձեան իւր
Լուսաշաւիղ՝գրքի մէջ կարծում է, որ բարոյեաց յառաքեալսն,
աւելի ուղիղ է, այդ չի նշանակում թէ նա վերջին ճշմարտու-
թիւնն է ասում: Նրա Լուսաշաւիղն էլ կարելի է դասել այն
բոլոր կրօնական գրքերի կարգում, որոնց մասին ակնարկել է
4. Հ. Ս.-ը. Ովքե՛ր էին այն հոգևորականները, որոնք իրանց

Հայրերից սովորած այդս յարութեանն են ասել, զէ որ ինքն
 Կ. Հ. Ս.-ը ասում է, որ Ժէ-րդ դարից սկսած բոլոր ձեռա-
 գրերում և տպագրութիւններում այնպէս է, ինչպէս այժմ կար-
 դացում է եկեղեցում. իսկ մենք ապացուցեցինք, որ ԺԳ-րդ դա-
 րից առաջ էլ այդպէս էր. 36 տարի է Մայր Աթոռումն ենք-
 տեսել ենք հարիւրաւոր տաճկաստանցի հոգեւորականներ թէ
 եպիսկոպոս, թէ վարդապետ և թէ քահանայ. ոչ մէկը պատա-
 րադելիս չէ շեղուել տպագրածից. Մայր Աթոռի հնագոյն եպիս-
 կոպոսներից, որոց մէկն էր և Հանգ. Մակար կաթողիկոսը, ոչ
 որ չէ ասել բարոյկեաց յառաքեալանն և այդս յարութեանն:
 1844 թուին Մատթէոս պատրիարքի (յետոյ կաթողիկոս) օրով
 տպուած, և 1887 թուին Լօնդօնում հայերէն և անգլիերէն
 խորհրդատետրում, որ ամենավերջինն է, նոյնպէս տպուած է
 բարոյկեաց զառաքեալն և յոյս, յարութիւն, Խորհրդատետրի
 անգլիերէն թարգմանութիւնը եղել է՝ ինչպէս կարդում ենք
 «Աղգի» մէջ առաջին անգամ Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանի
 ռուսերէն հրատարակութիւնից, երկրորդ հրատարակութիւնը
 Ադրիանուպօլսեցի Պօղոս պատրիարքի հրատարակութիւնից.
 իսկ երրորդ կամ մեր ձեռքին եղածը՝ 1761 թուին Զմիւռնիայում
 և 1873 թուին Երուսաղէմում տպած օրինակներից, Թէ Արղու-
 թեան Յովսէփ Արքեպիսկոպոսը, թէ Ադրիանուպօլսեցի Պօղոս
 պատրիարքը և թէ նրա աշակերտ Մատթէոս պատրիարքը ի-
 ռանց ժամանակի ամենահեղինակաւոր հայերն էին. արդ, տես-
 նում ենք, որ այդ երանելի հայերն էլ բարոյկեաց զառա-
 քեալն և այդս, յարութիւնն են կարդացել և այդպէս էլ ա-
 լանդել են իրանց հետեորդներին. Մեր տեսածներից Գէորգ
 Դ. որ ծայրագոյն վարդապետների գաւազանագրքում իրան ա-
 շակերտ է համարում Ստեփանոս Արքեպիսկոպոսին, որ
 յայտնի էր Աղաւնի մականուամբ, նոյնպէս հետևող էր իւր հո-
 գեւոր նախնիներին. ներկայ Վեհափառ Հայրապետը, որ իւր
 83 ամեայ հասակում տեսել է շատ հեղինակաւոր հոգեւորական-
 ներ թէ Ցաճկաստանում և թէ Ռուսաստանում, կարդում է
 այնպէս, ինչպէս կայ տպուած խորհրդատետրում:

Ներսէս պատրիարքը իւր արեղայութեան առաջին պա-
 տարարդին է միայն այդս յարութեանն ասել, որը, իբրև նորու-
 թիւն, բաւական խօսք ու զրոյցի առիթ է եղել. Սյդ արել է
 նա իւր երիտասարդութեան ժամանակ. ով երիտասարդ է եղել,
 գիտէ, որ այդ հասակը յաւակնուտ է, տպաւորուող և ձգտող նո-

րութեան՝ Այս հանգամանքին պէտք է վերագրել ներսէս պատ-
րիարքի երիտասարդութեան փորձը, որի շարժառիթը ամենայն
հաւանականութեամբ Գաբրիէլ վարդապետ Այվազեանի (յետոյ
Արքեպիսկոպոս) պատարագի մեկնութեան մէջ մի դիտողութիւնն
է եղել, Հանգուցեալ Այվազեանը երեւի, Անձեացու մեկնութիւնը
ի նկատի ունենալով՝ գրել է. «Հին և ընտիր գրչաց մէջ այսպէս
կը կարգացուի՝ սա է կեանք, յոյս յարութեան...» Բայց սովո-
րական ընթերցողածին իմաստն ալ նոյն է: Եւ այդպէս էլ
ինքն միշտ «յոյս, յարութիւն» էր ասում պատարագելիս:

Այս հանգամանքը երկու պատճառով մէջ բերինք, նախ՝
յայտնած լինելու համար, որ Կ. Հ. Ս.-ից էլ առաջ իւր դիտած
ընթերցմունքը ուրիշներն էլ դիտել են. երկրորդ, որ դիտելով
հանդերձ սովորական կարգից չեն դուրս եկել Ի մի բան. եթէ
բարոզեաց զառաքեալն՝ ուղիւ վարդապետութեան հակառակ
լինել լեզուի կողմից էլ սեալ լինէր, հայ կաթողիկ եկեղեցին
պարտաւորական չէր դարձնի Այս մասին Հանգ. Գաթրճեանի
«Հանգանակ Հաւատոյ» գրքում (երես 46—47) կարգում ենք.
«Հաւատոյ ծաւալման Ժողովը 1833-ին Յուլ. 14-ին զրեց Սըր-
բազան բահանայապետին հրամանաւ առ Անտոն Նուրիճեան Աբբ
եպիսկոպոս նախագահ Կ. Պոլսոյ... Թիւ 12 «Նոյնին մէջ (Հան-
գանակ) չըսուի—բարոզեաց զառաքեալս, այլ ըսուի՝ բարոզեաց
զառաքեալն»:

Հանգ. Գաթրճեանը իւր «Հանգանակ հաւատոյ» գիրքը
գրել է ընդդէմ Մսերեանի «Հրահանգ բրիստոնէական վարդա-
պետութեան» գրքին (եր. 48): Նա ամեն ջանք գործ դնելով
հանգանակի վերաբերութեամբ Մսերեանցի գրածները հերքել,
այնուամենայնիւ խոստովանում է և ճշմարտութիւնը Ահա այս
դիտումաւոր գրուածքի ցուցումներն է հիմք ծառայեցնում Կ.
Հ. Ս.-ը իւր ընթերցմունքն արդարացնելու. մենք էլ հերքելու
համար իւր առարկութիւնները, իւր ցոյց տուած աղբիւրներին
դիմեցինք:

— Դ. Կ. Հ. Ս.-ը եկեղեցական պատմութիւնների, բարոզ
գրքերի ու կրօնի դասագրքերի սեալները կապում է եկեղեցա-
կան գրքերի հետ. և մեր առարկութեանը, թէ եկեղեցական
գրքերում ըստ կամս սրբագրութիւն թղյաւորելի չէ, նա գրում
է. «Ի՞նչ է մեր սկզբունքն է՝ իբրև եկեղեցւոյ դասնութիւն
և կարգ ընդունել այն միայն, ինչ որ եկեղեցական իշխանու-
թեան թղյաւորութեամբ լոյս տեսած գրքերի վերջին ապագրու-

թե՛ ան մէջ կայ... պէտք է սովորենք... մեր ժամանակի բրիտանականներին, որոնք սովորեցնում են, թէ Հայոց եկեղեցին երկու բնութիւն է դաւանում... այնպիսի քարոզքներից, որոնց մէջ քարոզւում է, թէ բարի սպասակով զոյւթիւն առնելը մեղք է։ այնպիսի դասագրքներից, որոնց մի երեսում ասուած է՝ ս. Ներսէս մեռաւ 374 թուին և նորան յաջորդեց իւր որդին Սահակ, միւս երեսում, թէ ս. Ներսէս 381 թուին ներկայ էր Կ. Պօլսի ժողովում։

— Կրօնական գրքերը ժամանակաւոր են. նրանց սխալները պէտք է վերագրել հեղինակների տգիտութեանն ու անփութութեանը և թոյլ տուողների անուշադրութեանը։ Դժբաղդարար կրօնական գրքեր հրատարակելու անպարէզը մնում է և կը մնայ համբալներին, քանի որ ձեռնհասները, կարծելով որ իրանց գրածները հասկանալու պատրաստուած մարդիկ չը կան, գետ չեն հրատարակում իրանց լաւագոյն արտադրութիւնները։ Դրանց արդարանալու մի միջոցն էլ այն է, թէ գիտութիւնը միշտ առաջագիծում է, որովհետեւ չի կարելի գիտութեան վերջին խօսքն ասել, ուստի և սպասում են՝ գիտութեան վերջին խօսքը ասելու պատիւը իրանց վերապահելով։ Որովհետեւ այս այսպէս է, մնում է մեզ սպասել և յուսալ։ Կրօնական գրքեր զրոգները անհասներ են. նրանց գրածները կարող են սրբագրուել. և ամենալաւ դատաստանը կամ արագ վաճառումն է, կամ անվաճառ մնալով՝ հեղինակի վերայ ծանրանալը տպագրութեան ծախքի պատճառով։

Եկեղեցական գրքերը մշտնջենաւոր են. դարերի ընթացքում բնութեամբ զտուած և ճշտուած։ Դրանք միայն եղած օրինակից արտատպւում և հրատարակւում են. եթէ այդ հրատարակութիւնների մէջ տպագրական սխալ պատահի՝ կարող է սրբագրուել. իսկ այդ սրբագրութիւնը ոչ մտքի շփոթութիւն և ոչ էլ հերձուած կարող է առաջ բերել։ Եկեղեցական գիրք կոչւում են եկեղեցում աստուածապաշտութեան ժամանակ գործածուած մատենները։ Քրիստոնէական վարդապետութիւնը և քարոզգիրքը կրօնական գրքեր են. իսկ խորհրդատեարը և Մաշտոցը՝ եկեղեցական մատեններ, Քրիստոնէական և քարոզգիրք ամեն մի ձեռնհաս կամ յաւակնող մարդ կարող է գրել. իսկ խորհրդատեար՝ ոչ ոք։ Ուրեմն և ոչ ոք իրաւունք չունի անհատաբար սրբագրել և կամայական ընթերցմունք ներմուծել։

— Ծ. Կ. Հ. Ս.-ը ասում է, որ սրբագրութիւնից առաջա-

նալիք հերձուածներից պէտք է չէ վախենալ, որովհետեւ Բրիտանոս ասել է. «Մի՛ համարիք, եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն. այլ սուր. եւ, շարունակելով իւր խորհրդածութիւնը, աւելացնում է. «նիկոնը պէտք է չը սրբագրէր գրքերը, որպէս զի հերձուած առաջ չը գա՛ր. Պէտք է ուրեմն թող տայ՝ որ իւրաքանչիւր նոր ապագրութեան մէջ մի քանի տասնեակ և մի քանի հարիւր նոր սխալներ աւելանային. սոքա ևս ժամանակի ընթացքում սրբագործուէին, և վերջը այնտեղ հասնէր, որ մարդիկ երկիւղածութեամբ կարդային աղաւաղուած և անհասկանալի բառեր և չը համարձակուէին սրբագրել, հասկանալի դարձնել. որովհետեւ փոքրիկ փոփոխութիւնն անգամ իբրեւ խորթութիւն սրբապղծութիւն կը համարուէր»:

Այնպիսի մի ժամանակ, երբ ժողովուրդը նիւթապէս և բարոյապէս կեղեքւում է, ամենին ցանկալի չէ կրօնական վեճերով պառակտումն ձգել ժողովրդի մէջ. նրա ներքին խաղաղութիւնը վրդովել և հերձուածների պատճառ դառնալ, «Ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր» Բրիտանոս բոլորովին ուրիշ բանի համար է ասել. և, եթէ մի անգամ այդպէս է ասել հարիւրաւոր անգամ էլ խաղաղութեան մասին է խօսել, Բրիտանոնէական հաւատքը պինդ պահելու համար սրից պէտք է վախենալ. բայց եկեղեցու ներքին խաղաղութիւնը անդորդուելի պահպանելու համար ոչինչ չը պէտք է խնայել. Դրա համար է, որ եկեղեցին միշտ աղօթում է. վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զճէր աղանցսոքա: «Ջխաղաղութիւն պարգեւա՛ մանայն աշխարհի. եկեղեցեաց և այլն. Կրկնում ենք. ապագրական սխալները, որոնք շփոթում են միտքը, կամ հակառակ են ուղղագրութեան, կարելի է միշտ սրբագրել. բայց եկեղեցու լրութիւնից ընդունուածը, որ չի հակառակում առողջ դատողութեան և լեզուի կանոններին, ըստ կամս սրբագրել և օտաբաճայն ընթերցմունք մուծանել եկեղեցու մէջ պառակտելով եկեղեցու միութիւնը, սրբապղծութիւն ենք համարում և դատապարտելի գործ: Մեր եկեղեցական կարգերը և գրքերը մինչև 18 դարը քննուելով, զտուելով՝ որոշ աստիճանի կատարելութեան են հասել. այժմ մեզ մնում է «զաւանդն» սուրբ պահելու գիտակցութիւնը:

— Զ. Կ. Հ. Ս.—ը ասում է. «Ժ-րդ դարում Հայոց կաթո-

ղեկոսներից մէկին ձգեցին հայրապետական աթոռից որովհետեւ իկոնները է մտցրել եկեղեցու մէջ. բայց այսօր Հայոց եկեղեցի դրեթէ չի գտնուի, ուր այդպիսի իկոններ չը լինեն։ Այնուհետեւ պատմում է, թէ ինչպէս Վեհ. Հայրապետը Ռուսաստանում արած ճանապարհորդութեան միջոցին տեսնելով իկոնների և խաչվառների յաճախութիւնը եկեղեցիներում հրամայել է դուրս տանել, եւ թէ, երկու տարուց յետոյ իւր ճանապարհորդութեան միջոցին, ամենն էլ իրանց տեղերումն են ցոյց տուել, — որովհետեւ ժողովրդի աչքը միանգամ սովորել էր. Վեհի ճանապարհորդութիւնը 1895 թուին է, իսկ Կ. Հ. Ս.-ինը 1897-ին. այդ այն ժամանակն է, երբ մենք Բեսարաբիայումն էինք։

— Երկրորդ անգամն է, որ Կ. Հ. Ս.-ը ակնարկում է Բեսարաբիայի թեմի եկեղեցիների շեղուած լինելը բուն հայկական կարգից ու կանոնից. շատ հեռուից հասկացնելով, որ մենք կամ անհոգութեամբ կամ գիտութեամբ չենք աշխատել եկեղեցիների մէջ եղած նորամուծութիւնները հեռացնել, և Վեհափառի կարգադրութիւնից յետոյ ևս, փոյթ չենք ունեցել այդ կարգադրութիւնը յարատեւ կացուցանելու. Որովհետեւ մենք ուղեկցում էինք Վեհափառին, և այնուհետեւ թեմի կառավարիչ էինք նշանակուած։ Վեհը իւր պրոքուրութեան ժամանակ ոչ մի տեղ խաչվառները և պատկերները չէ հրամայել դուրս տանել. այլ միայն կարգադրել է, որ սեղանների վերայ բիչ աշտանակ և ս. անթներ լինեն. և սեղանի ճակատը փակող մեծ ջահերի տեղ փոքր ջահեր լինեն։ Բեսարաբիայի թեմի եկեղեցական կարգերի խանգարման մասին, ակնարկուեց ձեմարանի 25-ից յետոյ Ղռի այգում եղած ընկերական ճաշի ժամանակ, Գեր. Տ. Ներսէս սրբազան Արքեպիսկոպոսի պատուին առաջարկուած բաժակաձառի մէջ։ Ամենայն խոնարհութեամբ այդ հրապարակական դատապարտութիւնը յսեցի և տարայ, որովհետեւ պատշաճաւորութիւնը այդպէս էր պահանջում։ Այժմ կը ցանկայի իմանալ Կ. Հ. Ս.-ից և բաժակաձառ արտասանող նրա ընկերից. իմ թողած դրութիւնը փոխուել է և ո՞րքան. Եթէ յիշուի, Բեսարաբիայի եկեղեցիներում այդքան խոշոր խանգարումներ եղել են իմ օրով, ես կարգարանամ ասելով, որ իբրեւ ժամանակաւոր կառավարիչ պէտք է, անփոփոխ պահելով եղած դրութիւնը, ընթացիկ գործերին ընթացք տայի. իսկ եղած դրութիւնը հասել էր ինձ լիազօր առաջնորդներից։

Գալով պատկերներին և խաչվառներին, կասենք. մեր եկեղեցիներում անյիշատակ ժամանակներից միշտ եղել են պատկերներ և խաչվառներ. Աւանդութիւնը պատկերների Հայաստան ներմուծուելը հասցնում է առաքելական շրջանին, Հայաստանի լուսաւորիչներն ս. Թադէոս առաքեալը Եդեսիա բերեց Յիսուսի անձնագործ պատկերը, որ դաստառակ է կոչւում ս. Բարդուղիմէոսը Հայաստան բերեց ս. Աստուածածնի պատկերը և թողեց կոյսերի համար իւր շինած Հոգեաց վանքում: Դեռ 8-րդ դարում Սողոմոն Գառնեցի կաթողիկոսը ասել է. «Եթե թամ զի գեղապաճոյճ դեղով նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետան տամ յորմ եկեղեցւոյ» (Յովհ. կաթ.), որից երեւում է թէ հայրապետների պատկերները դեռ 8-րդ դարից առաջ նկարուում էին եկեղեցու որմին: (տես և մեր Եկեղեց. պատմ. երես 145, 224): Ս. Մեսրոպ Մաշտոցին վերագրուած Մաշտոցի մէջ մենք ունենք պատկեր օծելու կարգ. Ներսէս Հնորհային ԺԲ-րդ դարում Աստուածամօր պատկերը, իւր մի շարականի մէջ, բարեթօս է կացուցանում առ Քրիստոս՝ ասելով. «Չկենդանագիր անարատ ծնողի բո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո...» (Ի քէն հայցեմք. մեծ պատի խղաղականի երգ): Ալէքսանդրապօլի «Աստուածամօր Եօթն Վիրաց» պատկերը, որ հաւասարապէս յարգւում է բոլոր բրիտանեաներից՝ մի քանի դարերի հնութիւն ունի ու ճիշտ իկոնայի ձևով է նկարած ու շրջանակի մէջ դրուած: Նոյնը կարելի է ասել և խաչվառների մասին: Այսօր էլ կան և դարերով գործ էին ածւում խաչվառներ, որի մի օրինակը ունենք Մայր Աթոռի Թանգարանում, Լուսաւորչի խաչվառ անունով, որ թէև, Լուսաւորչու ժամանակից չէ, բայց մօտ 300 տարուայ հնութիւն ունի: Արդ, միանգամ, որ եկեղեցին ընդունել է և՛ պատկեր և՛ խաչվառ՝ դրա մասին առարկութիւն անելը աւելորդ է: Մնում է՝ ճաշակի խնդիրը, Երուսաղէմում կամ Ալէքսանդրապօլի գիւղերից մէկում նկարած պատկերը գերադասել որոշ դպրոցի (շիւլա) նկարից—օրինակ իտալական՝ Ռաֆայելի և Ռուսական՝ Սեմիրադակու, այդ ի կամս իւրաքանչիւրոյ թողնուած է. պատկերը շրջանակաւորել խառատ Նիւսկոսի շինած կոպիտ, կամ հմուտ վարպետի վայելուչ և շքեղ շրջանակով՝ այդ ևս իւրաքանչիւրի կամքին է թողնուած: Բայց կիրթ ճաշակը միշտ գեղեցիկը կը գերադասի Եկեղեցու պայծառութիւնը պահանջում է միտք գրաւող որբան կարելի է շատ, բայց

դեպքիկ նկարուած կրօնական պատկերներ, քան աղքատիկ յօրանոց ներկայացնող լերկ պատեր բծաւորուած փոշիներով և սեւացած մրուրներով, — Ի մի բան. Հայոց եկեղեցիին պատկերամարտ չէ եղել և չէ: (Պատկերների գործածութիւն. տես և Կիրակոս Գանձակեցի. եր. 98—99: Մոսկվա և մեր եկեղ. պատմ. եր. 214—215):

Ժող. դարում Վահան կաթուղիկոսը զահընկեց եղաւ իւր յունամոլութեան և ոչ թէ իկոնաներ ներմուծելու համար. Վահանի զահընկեցութեան առիթով յունական իկոնաներ յիշուած է, որպէս ապացոյց նրա յունամոլութեան:— Շատ անգամ առարկութիւն է լինում և խաչկալների մասին. Մենք խաչկալը մեր եկեղեցու ոգուն հակառակ չենք գտնում քանի որ սեղանը կաղմում է խաչկալի կենդրոնը. և խաչկալը տարածուած է սեղանի վերայ և երկու կողմերը բաց թողնելով առաջ: Առանց խաչկալի սեղանը նման կը լինի կամ կաթոլիկականին կամ բողոքականին: Խաչկալը Հայոց եկեղեցում բաւական հնութիւն ունենալով հանդերձ (Մայր Աթոռի հին խաչկալը Ջմիրունացւոց նուէր) այն յարմարութիւնն ունի, որ հնարաւորութիւն է տալիս սեղանի ետեւ պահել զանազան սպասներ ու անօթներ և այլն, որոնց աչքի յանդիման լինելը շատ էլ վայելուչ չէ: Մենք տեսել ենք հին եկեղեցիներ, որոնք աւանդատնից դէպ ի սեղանի ետեւ անց ունին. այս այն յարմարութիւնն ունի, որ սեղանի առաջից յաճախակի երթևեկութիւնը սահմանափակում է:

— Է. Կարապետ Հայր Սուրբը ասում է, որ մեր ծիսական կարգաւորութիւնները, որ «եկեղեցու յրութիւնը ընդունում ու քարոզում է» (իմ բառերն են) կանոնական կարգով և հաստատուն որոշումներով պարզաբանուած, ճշտուած ու չափի տակ չեն դրուած. ու միակերպ չեն ընդունուած ու անշեղ պահպանուած ամբողջ հայ ժողովրդի մէջ:

Այս առարկութեան պատասխանած լինելու համար մէջ կը բերենք վերջերս ս. Էջմիածնում տպուած մեր եկեղեցական գրքերի յառաջաբանները:

1, ՃԱՇՈՑ, տպուած Էջմիածնում 1872 թ. Գէորգ Դ. Հայրապետի օրով:

«Պատուիրեաց Հայրապետս մեր, ուշի ուշով առնուլ ի համեմատութիւն զընտիր ընտիր ձեռագիր օրինակս աստուածաշունչ գրոց և ճաշոցաց գանձելոց ի մատենադարանի ս. Աթո-

ռոյս... Ես քանզի զայս ամենայն այսպէս ի կարգի եղեալ ընծայել ուրիշ մանկանց Հայաստանեայցս եկեղեցւոյ պատուէր ընկալաք ի սրբոյ Հայրապետէն մերմէ ի Գեորգեայ դ. էս...

2, ՄԱՇՏՈՑ ԶԵՌԵԱՒԻՐՈՒԹԵԱՆ կղերիկոսաց ևն. տպուած էջմիածնում 1876 թ. Գեորգ դ. ի օրով:

«Առ այս ի մի վայր ժողովեալ Աւհափառ Հայրապետի աւելի քան զեօթանասուն և Հինգ զրչագիր Մաշտոցս ձեռնադրութեան, և կոչեալ առ ինքն եպիսկոպոսուն և վարդապետս և դպիրս ի միաբանից Մայր Աթոռոյս և ինքնին անձամբ զուրկեցեալ նոցին աշխատասիրութեանցն, իւրով իսկ ձեռամբ և անխնայ մտադրութեամբ նշանակեալ յարդարեաց զուղղագոյն թուեցեալն ի բանից անտի և բառից բազմաթիւ զրչագրացն, և պատրաստեալ զառաջիկայս ընտիր օրինակ հրամայեաց մուծանել ի տպագրութիւն: ...Ձի եթէ ինքն իսկ Հայրապետս մեր ոչ ի դէպ ոչ պատշաճ վարկաւ զառ ի նախնեաց կարգեալսն փոփոխել իւրովն իշխանութեամբ, մինչև ազգայնոյ ընդհանուր եկեղեցական իրիք հանգերձեալ ժողովոյ մանրակրկիտ քննութեամբ սահմանեալ իցէ փոխել կամ զեղչել ինչ ինչ նկատելիս ի բանս նշովից, այլ շատ համարեցաւ. դուն ուրեք աննշանս ինչ և եթ յաւելուր յիւրմէն ի խրատսն պարզաբնութեանս, հիմնեալս ի լաւագոյն օրինակս զրչագրաց, և ի հաստատուն աւանդութիւնս, որչափ եւս առաւել չէ օրէն իշխել ումեք ի մեծաց կամ ի փոքունց ձեռնամուխ լինել յայնպիսի ինչ փոփոխումն կամաւոր: Քանզի... արարողութիւնք և ծէսք ցանկ իմն և պատուար են ոգւոյ ճշմարիտ աստուածաշնորհութեան, և անսուտ է հոգեշունչ բարբառ Խմաստնոյն՝ թէ Որ քակէ զցանկ այսպիսեաց գեղեցիկ և չքնաղ աւանդութեանց, հարցէ զնա մոլորութեան օձ դարանակալ, և մահացուցէ զայնպիսի թշնամին Եկեղեցւոյ սրբոյ:»

3, ԽՈՐՀՐԴԱՏԵՏԻ տպուած է էջմ. 1880 թ. Գեորգ դ. Հայրապետի օրով:

«Հոգևոր Տէրն հրամայեաց զի որքան ձեռագիր խորհրդատեարք դառնին ի մատենադարանի Մայր Աթոռոյս և ի մերձակայ վանորայս, զամենեւեան ի մի հաւաքեալ բաղդատեսցուք ընդ միմեանս և ուղղեացուք զամենայն զվրիպակսն զրչաց և տպագրութեանց ըստ համաձայնութեան մեծագոյն մասին հնա-

Հնադոյն և ընտրելադոյն օրինակաց եթէ ձեռագրաց և եթէ տրպագրելոց... Յետ այսպէս աւարտելոյ զբաղդատութիւնն քառասուն օրինակաց, ներկայացուցաք ի նկատողութիւն սրբազնասուրբ մերոյ Հայրապետիս, որ ըստ իւրումնն քաջ Հմտութեան նրբազնին եղեալ առ մի մի յօդուածս տարբերութեանց իւրաքանչիւր օրինակաց, հրամայեաց տպագրել զայս օրինակ... Արդ ըստ հրամանի նորին սրբութեան ահաւասիկ տամք ի լոյս զայս խորհրդատետր համաձայն երրորդ տպագրութեան օրինակի...

4. Ատենի ժամագիրք. տպած էջմ. 1891 թուին հրամանաւ Սինոդի Սրբոյ Էջմիածնի. յառաջաբան Տօնացոյցի, որի մէջ հանգ. Սիմէօն կաթողիկոս Երևանցին գրում է 18-դ դարում.

...Ամենեքեան պարտիք զնոր տօնացոյցս զայս առ ձեռն բերել և սովաւ վարիլ այսուհետեւ Եւ մի՛ գուցէ ումանց զանց արարեալ զհրամանաւ մերով՝ թողեալ զայս նորոգ տօնացոյցս վերստին հնովն վարիցին ըստ կամս իւրեանց... Ամէն ասեմ ձեզ. զի այնպիսիքն յայտնապէս մեղանչեն ընդդէմ սրբոյ եկեղեցւոյ և հրամանիս մերոյ. Զի առ ոտն հարկանեն զաստուածահաճոյ հրամանս մեր, և վերստին և ևս առաւել լինին պատճառ այլայլեցման և տարաձայնութեան սրբոյ եկեղեցւոյս մերոյ և սորին օրինակատարութեանն. Որք և արժանի իսկ են այնպիսիքն ընդունել նզովս յամենայն սրբոցն Աստուծոյ, ի սուրբ եկեղեցւոյն և ի մէնջս:

Այս քաղուածներէից ընթերցողները տեսնում են որ մեր ծիսական կարգաւորութիւնները կանոնական կարգով և հաստատուն որոշումներով պարզաբանուած, ճշտուած ու չափի առակ են դրուած. Խոստորումն անողներին, Սիմէօն կաթողիկոսը ասում է. «արժանի իսկ են այնպիսիքն ընդունել նզովս յամենայն սրբոցն Աստուծոյ, ի սուրբ եկեղեցւոյն և ի մէնջս. Իսկ Գէորգ Դ. Մաշտոցի յառաջաբանում ասում է. «Որ քակէ զցանկ այսպիսեաց գեղեցիկ և չքնաղ աւանդութեանց, հարցէ զնա մոլորութեան օձ դարանակալ և մահացուցէ զայնպիսի թշնամին եկեղեցւոյ սրբոյ»:

Մնալով այն սկզբունքին թէ անհատը իրաւունք չունի ինքնիշխանաբար օտարաձայն ընթերցողածներ մոլծանել եկեղեցու մէջ, սրանով ընդ միշտ մեր կողմից փակուած ենք համարում այս մասին խնդիրը:

Յաւսիկ եպիսկոպոս

5 Դեկտմ. 1902

Ս. Էջմիածին: